

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՈՍԿԵԲԵՐԱՆ ԵՒ ԵԶՆԻԿ

Մեր առաջին թարգմանչաց մէջէն՝ հոյակապ և միանգամայն գործունեայ դէմքն է Եզնիկը թարգմանութեանց մեծամասնութիւն մը իրեն ընծայուած է առատօրէն. և ստուգել աշխոյժ, իմաստասէր և խոհեմ խառնուածքի տէր կը նկատուի:

Սակայն հոս՝ տեղը չէ Եզնիկի անձին նկարագիրն ընել, այլ տեսնել թէ որքան ներշնչուած և առգորուած է նա Ս. Հարց հոգևով, մանաւանդ Ոսկերեանին տրամարան մտքով:

Ոսկերեանի քսանեմէկ Անդրիանոսաց ճառերը նշմար մը չունին Ե. դարու թարգմանութեան, այլ թ—թ դարերուն կը թուի, ինչպէս զրուած է իւր յիշատակաբանին մէջ, Պետրոս կաթողիկոսին ժամանակ: (Թարգմ. նախ):

Բայց Թերևս կարելի է թէ եղած ալ ըլլայ, քանի որ կը տեսնենք թէ Եզնիկ յայտնի կերպով մէջէն ներշնչումներ ունի: Արդեօք յունարէն բնագրէն ուղղակի ազդուներ է թէ ինքն ալ թարգմաններ է, և ապա կորստեան մատուցած է. պատասխանը.... չենք գիտեր:

Ո—Թերևս (777)

ԵԶՆ (193)

Եւ ուստի՝ ասն, յայտ էջէ այս՝ եթէ երկիր ի վերայ Լուսբ բերեալ է՝ Լուս մարգարէին գիտէ. չէս ինքն ի վերայ ծովու հիմունս արկ նմա, ի վերայ գետոց պատրաստեաց զնա:

778

Նոյն

Եւ Թուի թէ այսոքիկ այսմ որ ասացաքս՝ Հա. կառակ իցեն, այլ բազում ժայնակցութիւն ունին:

Եւ այլ ևս ասեն՝ Թէ. ի վերայ ունի կայ երկիր, զիւրդ ասէ Գաւիթ՝ Թէ Հաստատեաց գերկեր ի վերայ Լուսբ, և դարձեալ՝ Թէ ինքն ի վերայ ծովու արկ գնիմունս նորա, և ի վերայ գետոց....:

Ձի նորա ի վերայ ունի ի տան, և սա ի վերայ Լուսբ, Արդ ոչ եթէ հակառակք ինչ միմեանց են գիրք, այլ զոր միոյն թողեալ է, միւսն առնուն նովին հոգևով:

Նմանութիւնը ակներև է. Ոսկերեան կ'ուզէ ցուցնել թէ ոչնչի վրայ հաստատուած է երկիրս, և ասոր արգելք չեն Գաւիթի խօսքերը: Նմանապէս և Եզնիկ, Գաւիթի խօսքը առարկողներուն՝ կը պատասխանէ, եւ երկու հեղինակներն ալ կը պաշտպանեն թէ Ս. Գիրքը հակասական չէ:

Գարձեալ ուրիշ բնաբանական օրէնքներու մասին, Եզնիկ՝ Ոսկերեանի օգնութեան կը կարօտի:

778

192

Բնութիւն իսկ է Լուս վերաբերել միշտ և Հաստապազ ի բարձունս ընթալալ:

Ձի ծուի և լուսի և բոց Լուսի քանդի Թնթեց են, ի վեր կողմն ցանալ:

Թէպէտև այս օրէնքը գիտնալու համար՝ հարկ չկայ մեծ ուսումներ ըրած ըլլալ:

785

10-11

Ասացաք եթէ ի լուսի տարեց զայս ամենայն Հաստատեաց, և սորո Հա. կառակեալք և մարտուցեալք մինչ գմիւն ոչ անցուցանէ:

Եւ այսպէս չորեքին բնութիւնն, ուստի աշխարհ կազմեալ և կայ, առանձինն ապականիլք են միմեանց, և խառնեալ ընդ ընկերին՝ օգտակարք և Հաստատեաց:

Ձեմ գիտեր որ եթէ Եզնիկ Ոսկերեանէն կարդացած չըլլայ այս սկզբունքները, ո՛ր սորվեր է: Աւելի առաջ երթալով, դժուարեւի պիտի տեսնուին նմանութիւնները:

790

14-15

Տեսնոր արդեօք զգեցեկութիւն նորին (արեգական), տես և արդ զպատմութիւն տկարութեան նորա... Եւ ոչ այսու միայն է տեսնել զտկարութիւն նորա յորժամ պահատի և նուազի, այլ և յամպոց ընթացս ծածկի:

Արդ բարեօք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ.... մերթ երթայ զօղէ իրեկ զարհուրեալ... և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար գտնեայ:

791

10

Իւրացանչիւր օք (տարր) զընկեր իւր ինքզն, և ասանց նորա լուծանի և ասպականի փանդի երկիր յոր

Արեգակն թէ բարի է, և առանց օդոյ խառնուածոյ այլիւ և ցամաքեցեացի է... և երկիր առանց

արկանին սերմանիք, եթէ ոչ տեղայ անմրկ յորոց... չորանան և լուծանին վաղ-վաղակի:

Նուրց պատառի և խորիւն լի...:

792

14

Յորժամ տեսնիցես զա-րեզակն ծագեալ, սրանչա-ցիք և երկրի պազ հրաշա-զործողին, և յորժամ տե-սանես զնա Թարուշեալ յամպոյ և աներևոյթ լեալ, իմացիք զտկարութիւն բը-նութեանն, և մի երկրի պազանք նմա որպէս Աս-տուծոյ:

Հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգին նո-ցա և զյորինն:

Ձիաճք պաշտիցեմք զա-րեզակն... որ ընդ ծա-մանակս ի խաւար դառնայ՝ ի յանդիմանութիւն և յա-մօթ իւրոցն պաշտօնէից (16):

Կարծեմ թէ այս նմանութիւնը բաւա-կան համոզիչ կրնայ ըլլալ. միևնոյն տրա-մարանութիւնը կ'ընեն երկուքն ալ արևա-պաշտներուն: Երկուքն ալ կը յորդորեն որ սըանչանանք, հիանանք Աստուծոյ մեծութեան վրայ, միջոցաւ անոր արա-րածներուն:

Ուրիշ պատառիկ մ'ալ գտայ, տարբեր նիւթի վրայ, այսինքն թէ ինչու մահկա-նացու եղաւ մեր մարմինը: Այսպէս.

ՈՒ. 796

ԵԿԻ 19

Հերժուածոց ասն՝ և թէ ոչ է այս (մարմնս) յԱստուծոյ եղեալ. զի ոչ էր արժան յայտնիկ, ասն, Աստուծոյ հրաշազործու-թեանցն, ապեղութիւնք և ցրտունք և արտասուց և աշխատութիւնք և տառա-պանք և զայլ ամենայն որ ինչ է մարմնոյ:

Հարցումս մատուցա-նեն ուստի՝ իսկ բնաւ են, ասն, այդպիսի անհա-թութիւնք. զի թէ Աս-տուած բարեաց արարիչ է և ոչ չարաց իրաց, ուստի՝ է խաւար, ուստի՝ են չա-րիք, ուստի՝ աշխատու-թիւնք, ուստի՝ լճկանք՝ մերթ ի ցրտոյ մերթ ի խորակի:

Բայց այս համեմատութեան մասին նմանօրինակ բան մ'ալ կայ Ս. Բարսեղի վեցօրէից մէջ՝ որ կ'ըսէ.

Բայց զհիւանդութիւն և զաղցատութիւն և զմահ և զքնամահն և զագիցի ազգի ցաւ և զախտս, և զամենայն ինչ որ արտմեցուցանէ զմարդիկ, չէ պարտ և չէ պատշաճ ի կողմանէ շարեաց ճամա-րեկ:

Արդ ուրեմն ի՞նչ կարելի է հետեցնել այսչափ համեմատութիւններէ վերջ, մի-թէ կարողացած չէ՞ Ոսկեբերանի գործերը՝ և անկէ ներշնչուած չէ՞: Եթէ ասոնք բա-ւական չեն հաստատուելու ըսածներս, կա-

րելի է նոյն իսկ Եզնիկի վկայութիւն, ներ մէջ բերել ասոր նկատմամբ:

Ի՞նչ ըսել կ'ուզէ այս բացատրութեամբ Եզնիկ, (էջ 10) «յամենեցունց առ հասա-րակ վկայեալ»։ որո՞նք են այս «ամենե-քին»ը, եթէ ոչ Ս. Հարց: Նմանապէս (էջ. 11) «Եւ զի այս այսպէս է ամենե-ցոսն յայտնի է»:

Եւ կամ երրոր պատասխան տալու հա-մար չարիքի նկատմամբ՝ կ'ըսէ թէ զա-մենից այս խնդիր տարակոյսի մէջ ձգել է, և մանաւանդ թէ «բազում արք առաքր վաւն նորին խնդիրս մեծամեծս արա-րին»։ —

Այս արք աւագներէն են Ոսկեբերան, ինչպէս նաև Բարսեղ, որ չարի և բար-ւոյ նկատմամբ բաւական զբաղած է, և որմէ Եզնիկ ուրիշ ներշնչումներ ունի:

Գ—Մ

Ս. ԳՐԱՑ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԵԼՈՎ՝

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընթերցողաց մտքերուն շփոթ չպատ-ճառելու համար, կարևոր կը համարիմ կանխել ըսելու թէ սրբազորարիւնք սրբա-զան պատմորեան ըսելով՝ Ս. Գիրքի վրայ քննադատութիւն ընել կամ մեկնաբանել չեմ իմամբ, ինչ որ յանդիմութիւն մը պիտի համարուէր անտարակոյս. որով-հետեւ զայն մեկնաբանելու հեղինակութիւնը մի միայն Ս. Եկեղեցւոյ տրուած է յաս-տուածային իրաւանց: Հոս, իմ նպատակս է պարզապէս պատմական և բանասիրա-կան դիտողութիւններ ընել Սրբազան Պատ-մութեանց մէջ աւանդուած մի քանի կա-րևոր հարցերու վրայ, նման այն քննա-դատութեան, որուն ենթակայ կ'ըլլայ միշտ պոստալին կամ աշխարհիկ կոչուած պատմութիւնը, որպէս զի ճշդութիւն անոր մէջ սպրդած ժամանակի, տեղւոյ, անձի են, նկատմամբ վրիպակներ, և կամ թէու-